ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՅՍԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Մեզ հասած վավերագրերի եւ սկզբնաղբյուրների վերլուծությունն աներկբա վկայում է, որ նիկեական փիեզերաժողովին նախորդել են պատմական եւ դավանաբանական բնույթի մի շարք իրադարձություններ, որոնք յուրահատուկ կատալիզատորի դեր են կատարել ուղղադավան երրորդաբանության հաղթանակի գործում: Այդ շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվում նաեւ Կոստանդին կայսեր[1] կրոնական քաղաքականությանը:

1 Հռոմեական ռազմական եւ քաղաքական գործիչ Կեսարանդին Ա Մեծը (Փլաբիոս Վալերիոս Ավրելիոս Կոստանդինոս, 273/274-337 թթ.) Դիոկղետիանոսի քառապետության արեւմտյան կեսար (293 թ.) եւ օգոստոս (305 թ.) Կոստանդիոս Քլորոսի եւ Հելենեի որդին է: Ծնվել է Իլլիրիայի Նայսոս (Նիս) քաղաքում: Դաստիարակվել է Դիոկղետիանոսի արքունիքում, որտեղից փախչելով ծառայության է անցել հոր մոտ: Հոր մահից հետո 306 թ. Գալերիոսից ստացել է կեսարի, իսկ Մաքսիմիանոս Դայայի կողմից՝ օգոստոսի տիտղոս: Գալերիոսի մահվանից (311 թ.) հետո իշխանության համար 4 օգոստոսների (Մաքսենտիոս, Կոստանդին, Լիկինիոս եւ Մաքսիմիանոս Դայա) միջեւ մղված պայքարում Կոստանդինը 312 թ. Մալվիական կամրջի (Հռոմում) ճակատամարտում հաղթում է Մաքսենտիոսին, իսկ Լիկիանոսը 313 թ.՝ Մաքիմիանոս Դայային: **313 թ. Մեդիոլանում (Միլան)** Կոստանդինի եւ Լիկիանոսի միջեւ միության դաշինք է կազմվում եւ **երկու կայսրերի ստորագրությամբ հրապարակվում է Միլանի նշանավոր հրովարտակը**: Կոստանդինի եւ Լիկինոսի միությունը բավականին անկայուն էր: Նրանց հակամարտության հանգուցալուծումը 324 թ. Ադրիանուպոլսի ճակատամարտն էր, որտեղ պարտության մատնելով մրցակցին՝ **Կոստանդինը դարձավ Հռոմեական կայսրության միահեծան տերը**:

Բյուզանդական պատմագրությունը փորձում է հիմնավորել, թե Կոստանդինը ծածուկ քրիստոնեություն էր ընդունել: Սակայն կայսեր կենսագիր Եւսեբիոս Կեսարացին եւ նրա հետեւությամբ եկեղեցական պատմագրությունը վկայում են, որ նա մկրտվել է (արիոսականության ճանաչված առաջնորդ Եւսեբիոս Նիկոմեդացու կողմից) մահվան մահճում: Տեղեկություններ են պահպանվել եւ այն մասին, որ մահվանից երկու օր առաջ կայսրը զոհ է մատուցել Զեւսին:

«Դաշանց թուղթ» անվավեր գրվածքում ավանդություն է պահպանվել նաեւ Կոստանդին Մեծի եւ Հայոց թագավոր Տրդատ Մեծի փոխհարաբերությունների մասին: Նրանում արձանագրված է, թե իբր երկու գահակալները մի կողմից Սեղբեստրոս քահանայապետի, իսկ մյուս կողմից Գրիգոր Լուսավորչի հետ «սիրո եւ միաբանության» դաշինք են կազմել, համաձայն որի Հռոմի աթոռը Գրիգոր Լուսավորչի աթոռին «առանձնաշնորհումներ» է տվել: Այդ ամենի մանրամասները տե՛ս **Եւսեբիոս Կեսարացի,** Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1887, դպր. IX, գլ. Դ, էջ 677-678, գլ. Է, էջ 682, գլ. Թ-ԺԱ, էջ 693-713, դպր. X, գլ. Ե, էջ 744-750, գլ. Ը-Թ, էջ 752-759, « **Четыре книги Евсевий Панфила, Епископа Кесарии Палестинской О жизни Блаженного Василевса Константина»** (այսուհետ՝ **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина). СПб., 1850, кн. I, гл. 19-59; с. 12-31, кн. II, гл. 1-18, с. 1-10. **Сокращение церковной истории Филосторгия** (сделанная патриархом Фотием, այսուհետ՝ **Филосторгий,** Церковная история). СПб., 1854, Сказ. О свт. И слав. Велик. и Чудот. Артемие, гл. 5, с. 442-443. **Сократ Схоластик**. Церковная история, М., 1994, кн. I, гл, 2-4, с. 2-9. **Созомен Эрмий Саламинский.** Церковная История. СПб, 1851, кн. I, гл. 2, с. 13-14;

Ավանդաբար մասնագիտական գրականության մեջ Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականության գնահատման համար հիմք է ընդունվում Եւսեբիոս Կեսարացու այն հավաստումը, թե քաղաքական իշխանության համար մղվող պայքարում Կոստանդինը ցանկանում էր, որ «բոլորը քրիստոնյա դառնան», բայցեւայնպես՝ հարկադրանքի չէր դիմում: Իսկ Կոստանդինի կրոնական քաղաքականության էությունը ներկայացվում է Աստծուն հղված հետեւյալ տողերով. «Ցանկանում եմ, որպեսզի բոլորի հանդարտության եւ ընդհանրական օգուտի համար քո ժողովուրդը անդորր վայելի, ցանկանում եմ, որպեսզի հավատացյալների նման, խաղաղության եւ անդորրի հաճույքը ճաշակեն նաեւ մոլորյալները, քանի որ այդ ճանապարհով հաստատված հարաբերությունները կարող են ճշմարտության ուղի դուրս բերել»[2]: Եւ չնայած այդ հավաստումներին՝ պահպանված վավերագրերի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ **Կոստանդին կայսրը հեռու է եղել քրիստոնեությունը պետականացնելու մտքից**: Դա կարելի է վկայել նաեւ կայսեր կրոնական քաղաքականությունը բնութագրող հետեւյալ տողերով. «... թող յուրաքանչյուրն անի այն, ինչի ձգտում է իր հոգին: Բարեմիտ մարդիկ պետք է իմանան, որ մաքրությամբ եւ սրբությամբ ապրում են միայն նրանք, ում Ինքդ (Աստված՝ Ա. Ք.) ես հանգչելու կանչում Քո սրբազան օրենքների ներքո, իսկ ովքեր նողկանքով են վերաբերվում դրան, եթե ցանկանում են, թող իրենց կեղծ վարդապետության վիճակի մեջ մնան: Մենք մեր բնության մեջ ունենք Քո կողմից տրված ճշմարտության սրբազան տաճարը, նույնը ցանկանում ենք նաեւ նրանց, որպեսզի համամտության գալով նրանք եւս սրտի բավարարման հաճույքն ստանան»[3]:

Այդ ամենը թույլ են տալիս պնդել, որ եկեղեցու նկատմամբ բարյացակամ տրամադրված Կոստանդին կայսրը այնուամենայնիվ դեռեւս հեռու էր քրիստոնեությունը պետականացնելու մտքից: Ընդունելի համարելով քրիստոնեության նկատմամբ կայսեր «առանձնահատուկ վերաբերմունքի» մասին Եւսեբիոս Կեսարացու եւ նրա հետեւությամբ եկեղեցական մատենագիրների հավաստումը՝ անուրանալի պետք է համարել նաեւ այն, որ **Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությունը նույնպես աչքի է ընկել տոլերանտությամբ**: Այդ եզրակացության համար հիմք է հանդիսանում կայսեր կրոնական քաղաքականության էությունը բացահայտող այն հրահանգը, որը պարտադրում էր. «... սնվելով հայրենի մտքերով, ոչ ոք թող չփորձի դրանցով վնասել մյուսներին. այն ինչ մեկը գիտի եւ հասկացել է, ապա եթե հնարավոր է, թող դա ծառայեցնի հանուն մերձավորի, իսկ եթե անհնարին է, դա չպետք է անել: **Քանի որ մի բան է կամավոր պայքարել անմահության համար, եւ միանգամայն այլ՝ եթե դա կատարվում է խարդավանքի միջոցով** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[4]:

Քրիստոնեության նկատմամբ Հռոմեական կայսրության քաղաքականության փոփոխության մասին կարելի է դատել նաեւ Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականութ-

---

Феодорит еписк. Кирский. Церковная История. СПб., 1860, кн. I, гл. 2, с. 14-15. **J. Vogt** Constantin der Grosse und sein Jahrhundert. 2 Aufl., Munchen, 1960; **Mac Mullen R.** Constantyn. London, 1970 եւ այլն:

2 **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина, кн. I, гл. 59.

3 Անդ, գլ. 56: Եւսեբիոս Կեսարացին բավականին հանգամանալից ներկայացնում է նաեւ մոլորյալներին դարձի բերելու (տե՛ս անդ, գլ. 57), երկրում խաղաղություն հաստատելու, ինչպես նաեւ հավատացյալներին խաղաղություն պարգեւելու (տե՛ս անդ, գլ. 58) եւ բարին գործելու (տե՛ս անդ, գլ. 59) համար Կոստանդին կայսեր կողմից Հայր եւ Որդի Աստծուն ձոնված փառաբանությունները:

4 Անդ, գլ. 60:

յան էությունը եւ ուղղվածությունը բացահայտող հետեւյալ խոսքերից. «Առաջին հերթին, ես շատ էի ցանկանում աստվածության մասին բոլոր ժողովուրդների ուսմունքները համախմբել, երկրորդ հերթին, որպես ծանր հիվանդությամբ տառապողի, Տիեզերքին վերադարձնել նախկին առողջությունը: Հետապնդելով այդ նպատակը` ես այլ բան էի քննարկում մտքի ներքին աչքով եւ այլ բան էի ջանում կատարել ռազմական ուժով, գիտակցելով, որ եթե բոլորի նման իմ աղոթքներով ծառայեմ Աստծուն, կվերականգնվի մտքի միասնությունը եւ հասարակական գործերի ընթացքը կփոփոխվի յուրաքանչյուրի բարեպաշտ նպատակներին համապատասխան»[5]:

Եւ այնուհանդերձ, այդ ամենը թերեւս անհրաժեշտ, բայց ամենեւին էլ բավարար հիմք չէ Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությունը բնութագրելու համար: Ավելին, սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ **նրա կրոնական քաղաքականության էությունն անհնարին է օբյեկտիվորեն արժեւորել Հռոմեական պետական (կայսերական) կրոնի առանձնահատկություններից դուրս**: Վերջինիս քննական վերլուծությունը հռոմեական իրավունքի մեծ գիտակ Թ. Մոմզենին բերել է ընդհանրացնող այն հետեւության, որ «... այդ դարաշրջանի կրոնափիլիսոփայական զարգացումներում ոչ մի նոր պահ չի նկատվում: Հռոմահելլենական պետական կրոնը եւ նրա հետ սերտորեն կապված ստոիկյան պետական փիլիսոփայությունը ոչ միայն հարմար գործիք էին ցանկացած կառավարության` օլիգարխիայի, ժողովրդավարության կամ միապետության համար, այլեւ պարզապես անհրաժեշտ էին այն պատճառով, որ անհնարին էր պետություն կառուցել առանց ամենապարբեր կրոնական տարրերի, ինչպես եւ գտնել պետական նոր կրոն, որն ընդունակ լիներ փոխարինել հին կրոնին»[6]:

Յուրահատուկ այդ «պահպանողականությունն» ամենեւին պայմանավորված չէր հռոմեական պետական կրոնի ինչ-որ առանձնահատկություններով: Պարզապես **կայսրության շրջանակներում կրոնի նկատմամբ ընդհանրական սկզբունքները սահմանված էին օրենսդրությամբ**, որոնց շնորհիվ **ներքին եւ արտաքին պայմաններից** (հարկադրանքներից) **անկախ, Հռոմում պետական (կայսերական) կրոնը յուրահատուկ «հավերժություն» էր ստացել**[7]: Օկտավիանոս Օգոստոսի կրոնական բարենորոգության արդյունքում ոչ միայն վերականգնվեցին կայսրության շրջանակներում առանձնահատուկ դեր ունեցող «նախնիների կրոնական ինստիտուտները» (քրմական կոլեգիաներ, տոնախմբություններ, տաճարներ եւ այլն), այլեւ դրանք լրացվեցին **պետական հարկադրանքի որակով հանդես եկող կայսրերի պաշտամունքով**[8]: Կրոնական այդ քաղաքականութ-

5 **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина, кн.I, гл. 65.

6 **Т. Моммзен,** История Рима.Т.III, Ростов-на-Дону, 1997, с.512.

7 Անդ, էջ 515:

8 Այդ կապակցությամբ Թ. Մոմզենը նաեւ գրում է, թե ամենեւին չի կարելի բացառել, որ կրոնի նկատմամբ այդ «հարկադրական ազատությունն» էլ դարձել էր այն բանի պատճառը, որ հռոմեական «... պետական կրոնի նկատմամբ հասարակական կարծիքն ընդհանրապես անտարբերությամբ էր վերաբերվում, բոլորի կողմից այն ընդունելի էր համարվում հասպատության քաղաքական պայմանականության որակով եւ կրթված քաղաքագետներից եւ հնագետներից բացի ոչ ոք նրա մասին առանձնապես հոգ չէր տանում»: Նա նաեւ հավելում է. «Բայց, եթե Հռոմում քաղաքական նկատառումներով պաշտպանվում էր հավատքային ցանկացած հիմքերից զրկված կրոնը, ապա դա հարյուրապատիկ լրացվում էր այլ ոլորտներում», տե՛ս անդ, էջ 512, 515: Վերլուծաբաններից ոմանք համարում են, որ կայսրերի պաշտամունքը հռոմեական կայսրության շրջանակներում լայն տարածում ունեցող կրոնական սինկրետիզմի արդյունք էր: Նրանք մասնավորապես գտնում են, որ այդ գործընթացի հիմքում ընկած են եղել

յան օրինաչափ ժառանգորդն ու կրողն է եղել նաեւ մեծ շրջահայացությամբ աչքի ընկնող Կոստանդին կայսրը:

Հավաստի փաստեր են պահպանվել այն մասին, որ իր նախորդների նման Կոստանդինը եւս կրել է «Գերագույն Քահանայապետի» (Pontifex Maximus) տիտղոսը, եւ որ ամենահետաքրքիրն է, իր դրամների վրա հատել է Արեւի աստծու պատկերը: **Բայց այդ ամենին զուգընթաց անուրանալի է նաեւ, որ Հռոմեական կայսրության միահեծան ղեկավարն արմատական քայլեր է կատարել կայսրության եւ քրիստոնեության շահերը մեկտեղելու ուղղությամբ**: Ընդհանրապես կայսրությունում տիրապետող է եղել այն մտայնությունը, որ «Հռոմը եւ աստծու կողմից ուղարկված Օգոստոսը» իշխում են հանուն «բոլոր ժողովուրդների բարօրության», պերճանք, ծաղկում եւ երջանկություն են պարգեւում նրանց, «քանի որ հավիտենական է Հռոմը եւ անհաղթ՝ Աստվածային կայսրը»[9]: Եւ քանի որ Օկտավիանոս Օգոստոսից սկսած հռոմեական բոլոր կայսրերը միաժամանակ համարվում էին եւ՛ պաշտամունքի օբյեկտ եւ՛ «Գերագույն քահանայապետ», նրանք կարող էին իրենց հայեցողությամբ ներմուծել կամ բարենորոգել ցանկացած պաշտամունք: Միաժամանակ, **հանդես գալով հռոմեական պետական գաղափարախոսության որակով՝ հռոմեական կրոնի ազդեցությունը չէր կարող խախտվել** ո՛չ փիլիսոփայական սպեկուլյացիաներով ու փաստարկներով եւ ո՛չ էլ դարաշրջանի ազատամտության (Լուկիանոսի) ծաղրի հետեւանքով:

Եւ քանի որ Դ դարասկզբին դեռեւս բավականին կենսունակ էր «հռոմեական ավան-

---

տեղական եւ օտարածին հելլենականացված աստվածների նույնական գործառնական հատկանիշների եւ այլ ատրիբուտների «ակկումուլյացիան», համապատասխան խորհրդանշանների մեկնաբանությունները եւ այլն (տե՛ս **H. Seyrig,** Le pretendu syncretisme solaire syrien / **Les syncretismes dans les religons greque et romaine.** Paris, 1973, p. 147-152. **E. Condarachi,** Le syncretisme dans les religions de l'antiquite. Leiden, 1975, p. 186-189 եւ այլն): Հեղինակներից ոմանք համեմատական վերլուծության հիման վրա պնդում են, որ նշված պաշտամունքը վաղուց տարածված երեւույթ էր ինչպես հռոմեական կայսրության արեւելյան (արքաների պաշտամունք), այնպես էլ արեւմտյան (առաջնորդների, երբեմն՝ արքաների պաշտամունք) պրովինցիաներում (տե՛ս **G. Charles Picarde,** Les religions de l'Afrique antique. Parise, 1964, p. 17-20 եւ այլն):

Թ-եեւ այդ մոտեցումները ճշմարտության ռացիոնալ հատիկ են պարունակում, այնուամենայնիվ հարկ ենք համարում մատնանշել, որ **կայսրերի պաշտամունքն ավելի շատ քաղաքական երանգավորում է ունեցել քան կրոնական**: **Այն հպատակ ժողովուրդներին հռոմեական կայսրության կողմից պարտադրված «հոգեւոր գերիշխանության» մի յուրահատուկ ակցիա էր, որն արեւելքում դրսեւորվում էր կենդանի կայսրերի** (որպես «հայրենյաց հայր») **աստվածացման (պաշտամունքի) տեսքով, իսկ արեւմուտքում կենդանի կայսրերի Հանճարի** (որը համարվում է մարդու մեջ ապրող աստվածային կայծ, աստվածներին ազգակից մարդկային հոգիների աստվածացում, որի շնորհիվ կայսրերն, իբր, պեղյակ են դառնում մարդկանց մտքերին, ցանկություններին, վարքագծին եւ այլն եւ կարող են ուղղորդել դրանք) **եւ մահացած կայսրերի աստվածացման (պաշտամունքի) ձեւով**:

9 **М. Е. Штаерман,** От религии общины к мировой религии / **Культура древнвго Рима**. Т. I, с. 179. Սկզբնաղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ Հռոմում կայսրերի պաշտամունքը նույնացվել է այլ աստվածներին (հատկապես Կապիտոլիական Յուպիտերին, Սերապիսին, Հերկուլեսին, Արեգակին եւ այլն) նվիրված արարողություններին: Կայսրերը հռչակվել են «Յուպիտերի որդի» եւ, որպես կանոն, կայսրուհիների հետ պատկերվել են աստվածների եւ աստվածուհիների խորհրդանշաններով (այդ մասին տե՛ս **J. Beaujeu,** La religion romanie a l'apogee de l'empire. Paris, 1955, p. 70; **Glay M.** Les syncretismes dans l' Afrique ancienne / **Le syncretisme dans les religions de l'antiquite**, p. 144-145; **Widman L.** Isis und Serapis bei den Griechen und Romern. Berlin, 1970, S. 177 եւ այլն): Այդ ամենով հանդերձ հարկ է ընդունել, որ «... թեեւ ավանդական հռոմեական աստվածությունների եւ պաշտամունքի անկումը եւ դրանց արեւելյանով փոխարինվելը չի հաստատվում, կայսրության կրոնական կյանքում տեղ գտան զգալի եւ շարունակ խորացող փոփոխություններ, որոնք նկատելի էին դեռեւս Հանրապետության վերջերին, բայց ասպիճանաբար ավելի մեծ նշանակություն էին ձեռք բերում», **М. Е. Штаерман,նշվ. աշխ.,էջ** 178:

դությունը», իսկ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում շարունակում էին ազդեցիկ դեր կատարել հռոմեական հասպատությունները (այդ թվում եւ կրոնական), այդ ամենն էլ, վերջին հաշվով, չէին կարող իրենցով **չպայմանավորել նաեւ** հռոմեականության ջերմ պաշտպան **Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականության էությունն ու ուղղվածությունը**: Սակայն անուրանալի է, որ այդ գործընթացում առկա էին նաեւ էական որոշ տարբերություններ: **Կրոնական քաղաքականության ասպարեզում Կոստանդինը կտրուկ սահմանազատվեց իր նախորդներից**: Եթե Դիոկղետիանոսը եւ աթոռակիցներից շատերը պայքարում էին քրիստոնեության դեմ, Կոստանդինը միանգամայն այլ քաղաքականություն որդեգրեց: Նա իշխանության համար մղվող պայքարի իր դաշնակցի՝ Լիկինոսի հետ 313 թ. հրապարակեց Միլանի հրովարտակը, որով **քրիստոնեությանը կայսրության մյուս կրոններին հավասար ազատ դավանանքի իրավունք տրվեց**: Դրան ի պատասխան 314 թ. Հարավային Գալիայի Արելատ քաղաքի եկեղեցական ժողովում որոշում ընդունվեց, ըստ որի քրիստոնյաներն այլեւս չպետք է հրաժարվեին հռոմեական բանակում զինվորական ծառայությունից: Նույն **314 թ. Հռոմի քահանայապետին իրեւ նստավայր հատկացվեց Լատերանի պալատը**: Բազմաթիվ քաղաքներում թափ առավ եկեղեցաշինությունը: **Քրիստոնեությունը փաստացի վավերացրեց իր տիրապետող դիրքը**[10]:

---

10 Կաթոլիկյան ավանդությունը Կոստանդին կայսեր անվան հետ է կապում նաեւ Հռոմում մոնումենտալ տաճարաշինության (Ս. Պետրոսի տաճար, Լատերանի, այսպես կոչված «կոստանդինական» բազիլիկներ եւ այլն) ծավալումը: Ի դեպ, քրիստոնեական արեւմուտքում Կոստանդինի նկատմամբ վերաբերմունքը կապված է ոչ թե նրա «իդեալական քրիստոնյա ղեկավար» լինելու, այլ՝ «Սիլվեստր Ա քահանայապետի աշակերտ լինելու» առասպելի հետ, տե՛ս «**Католическая энциклопедия**», Т.II, М., 2005, էջ1233: Այդ կապակցությամբ հիմնովին մերժելի պետք է համարել նաեւ Ը դարում Արեւմտյան եկեղեցում ձեւավորված «Կոստանդինի շնորհի» մասին պնդումները: Դա մի կեղծ շնորհագիր է, որն, իբր, 314 թ. Կոստանդին կայսեր անունից գրվել է Սեղբեստրոս Ա քահանայապետին: Այն «բաղկացած» է երկու մասից: Երկրորդ մասում, **իբր, Կոստանդին Մեծը Հռոմի Սեղբեստրոս Ա քահանայապետին «կայսրական իշխանություն եւ մեծարանք»** (potestatem et honorificentiam imperialem) **է շնորհել կայսրության արեւմտյան մարզերի եւ Իտալիայի վրա**, ինչպես նաեւ՝ **«առաջնություն** (principatum)՝ **բոլոր պատրիարքների եւ եկեղեցիների» նկատմամբ**: «Շնորհագիրը» ենս ծառայեցվել է արեւմտյան կեսարապապության («պապական իշխանության տեսության») «հիմնավորման» գործին: Կաթոլիկյան շինծու բազմաթիվ այլ «փաստաթղթերի» նման «Կոստանդինի շնորհագրի» կեղծ լինելը ենս ապացուցել է ԺԷ դարի իտալացի հումանիստ փիլիսոփա Լ. Վալլան: Մանրամասները տե՛ս **Л. Валла,** Рассуждение о подложности так называемой Дарственной грамоты Константина; Дарственная грамота Константина / **Итальянские гуманисты о Церкви и религии**. М., 1963, с.139-216, 334-337. տե՛ս նաեւ **Павлов А.** Подложная дарственная грамота Константина Великого Папе Сильвестру в полном греческом и славянском переводе // **"Византийский временник"**, Т.3, СПб., 1896, с.19-82. «**История древнего мира».** Книга III / **Упадок древных обществ**. М., 1989, с.310-311 եւ այլն:

Հարկ է մատնանշել, որ **Հռոմեական կայսրության շրջանակներում քրիստոնեության տիրապետող կրոն լինելու պարագան կապված էր քրիստոնեության ներքին զարգացման եւ աստիճանական ծավալման հետ եւ պայմանավորված չէր Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությամբ**: Եւ անընդունելի ու պատմականորեն հիմնազուրկ պետք է համարել այն պնդումները, թե իբր Կոստանդինի շրջանում «քրիստոնեությունը դարձել է կայսրության պետական կրոնը»: Այդ պարագային հատկանշական պետք է համարել բյուզանդագետ Ծ. Դիլի ընդհանրացնող այն պնդումը, որ Բյուզանդական կայսրությունում «... ուշադիր դիտարկման դեպքում անհերքելի է դառնում այն փաստը, որ **եկեղեցին մեծ մասամբ գործիք է եղել կայսերական քաղաքականության համար** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)», **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, էջ 67: Այդ օրինաչափությունը բնորոշ է եղել նաեւ Կոստանդին Մեծի կրոնական քաղաքականությանը:

Վերապահումով պետք է մոտենալ նաեւ «հեթանոսության նկատմամբ Կոստանդինի թշնամական վերաբերմունքի» մասին մոտեցմանը: Ճիշտ է, «Կոստանդնուպոլիսը լի էր հունական արվեստի գլուխգործոցներով,

Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականության դրսեւորումներից մեկը պետք է համարել Կ. Պոլիս մայրաքաղաքը, որն «... ավելի վեհապես դարձնելու համար Կոստանդինը հրամայեց կառուցել հոյակապ շինություններ եւ հատկապես՝ քրիստոնեական եկեղեցիներ, որոնցից առաջինն ու ամենահռչակավորը Սուրբ Սոֆիան էր: ... Նոր մայրաքաղաքը զարդարվեց անտիկ արվեստի գլուխգործոցներով, որոնք նա անողոքաբար հափշտակեց հեթանոսական մեծահամբավ սրբավայրերից»[11]: Նի՛ւ եւ նորի յուրահատուկ այդ համադրությունը մեկ անգամ եւս վկայում է, որ Հռոմեական կայսրության ներքին քաղաքականության ոլորտում ասպիճանաբար տեղ էին գտնում նոր իրողություններ: Դա չէր կարող իր կնիքը չդնել նաեւ կրոնական հարաբերությունների վրա: Արդյունքում, ինչպես իրավամբ նկատում է բյուզանդագետ Շ. Դիլը, «... **նոր մայրաքաղաքում կայսերական իշխանությունն ինքը ստացավ մի նոր բնույթ**: ... Կոստանդնուպոլիսն ավարտին հասցրեց այդ փոխակերպումը: **Կայսրը հետայսու աստվածային իրավունքով օժտյալ միապետ էր, որ կարգված ու ոգեշնչված էր Աստծո կողմից եւ ուներ բացարձակ իշխանություն**: Նրա անձը սրբազան էր համարվում, սրբազան էին համարվում նաեւ նրա գործերն ու նրան առնչվող ամեն բան: ... Որոշ ժամանակ հետո կայսեր օծման արարողությունը կատարելապես ընդգծեց այդ բնույթը, որը կայսերական իշխանությունը ներկայացնում էր որպես **աստվածային իշխանության արտացոլք** (ընդգծումները մերն է՝ Ա. Ք.)»[12]:

Այդ ամենը թույլ են տալիս պնդել, **որ Դ դարասկզբին հռոմեական կայսրության կրոնական քաղաքականությունը նախկինի նման աչքի է ընկնում օգտապաշտ բնույթով**: Ինչ վերաբերում է կրոնների նկատմամբ կայսերական վերնախավում տեղի ունեցող փոփոխություններին, ապա դրանց օբյեկտիվ պատճառներն ամենից առաջ պետք է որոնել կայսրության տարածքում տեղ գտած «կրոնական խճանկարի փոփոխության» մեջ: Կոստանդին կայսրը, պետության քաղաքական կենտրոնը տեղափոխելով Արեւելք, ակամա առնչվել է այն իրողությանը, որ **Արեւելքը քրիստոնեության առավելագույն տարածման շրջանն էր**: Դա մի այնպիսի հզոր ազդակ էր, որ իր համապատասխան արտացոլումը պետք է ունենար կայսեր կրոնական քաղաքականության վրա: Այդ եզրակացության օգտին են Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությունը բնութագրող հետեւյալ տողերը. «Այժմ աղաչում եմ Քեզ, մեծդ Աստված: Եղիր գթառատ եւ բարեգութ արեւելքում

որոնցով իր մայրաքաղաքը զարդարելու համար Կոստանդինը թալանել էր ամենահռչակավոր սրբավայրերը», սակայն դա ամենեին էլ չի վկայում, որ Կոստանդինը «քրիստոնեականացրել էր ողջ կայսրությունը»: Այդ պնդումը կարելի է հիմնավորել նոր մայրաքաղաքի՝ Կ. Պոլսի օրինակով: Այսպես, նորակառույց **սենատի** շենքին կից Կոստանդինի հրամանով կառուցվել էր հեթանոսական տաճար, որտեղ կայսրը տեղադրել էր Դոդոնեի Զեւսի եւ Աթենաս Պալլասի արձանները: Իսկ «կայսերական սրբազան պալատում» տեղադրվել էին Հելիկոնի հեթանոսական սրբավայրերից տեղափոխված մուսաների արձանները: Կ. Պոլսի հրապարակները զարդարում էին նաեւ Դելֆիքի (Ապոլլոնի արձան եւ գուշակ Պյութիայի եռոտանի), եգիպտական Թեբեի (Թութմոս Բ փարավոնի գրանիտե սյուն) եւ բազմաթիվ այլ հուշարձաններ: Նույնը պետք է ասել նաեւ Կոստանդինի ֆորումի (Forum Constantini) մասին: Սյունաշար այդ հրապարակը զարդարված է եղել կայսրության հեթանոսական մեծահամբավ սրբավայրերից բերված արձաններով եւ կիսանդրիներով: Արեւելյան մուտքի կամարի վրա կանգնեցվել էին Կոստանդին կայսեր եւ Հելենե (Հեղինե) արքայամոր մոնումենտալ արձանները: Նշանավոր էր հատկապես Կարմիր սյունը, որի վրա բարձրանում էր Կոստանդին կայսեր պղնձե արձանը (Ֆիդիասի Ապոլլոնի (Հելիոսպոլսի) վերափոխված արձանը): Արեւմտյան մուտքի կամարի վրա հանգչում էին Հերայի եւ Աթենաս Պալլասի մոնումենտալ արձանները, իսկ կենտրոնական աղբյուրի մոտ տեղադրվել էր Դանիել մարգարեի արձանը՝ առյուծներով:

11 **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, էջ 20-21:

12 Անդ, էջ 21:

ապրող քո ժողովուրդների նկատմամբ եւ իմ՝ քո սպասավորի միջոցով, առողջություն պարգեւիր երկարաժամկետ աղետներից տուժած բոլոր թեմականներին: Ամենայնի տիրակա՛լ Սուրբ Աստված, առանց որեւէ պատճառի եմ խնդրում դա: Քո ղեկավարությամբ ես սկսեցի եւ ավարտեցի փրկության գործը. ամենուր իմ առջեւից տանելով քո (դրոշը), ես առաջնորդում էի հաղթանակող զորքին,եւ ուր ինձ կանչում էր հասարակական ինչ-որ անհրաժեշտություն՝ հետեւում էի Քո ուժի միեւնույն նշաններին եւ շարժվում էի դեպի թշնամին: Դրա համար էլ Քեզ տվեցի սիրո եւ երկյուղի մեջ թրծված իմ հոգին, քանի որ անկեղծորեն սիրում եմ Քո անունը եւ բարեպաշտորեն խոնարհվում եմ այն ուժի առջեւ, որը Դու հանդես բերեցիր բազմաթիվ փորձերով եւ որն ամրապնդեց իմ հավատը: Այժմ, սեփական ուսերն առաջարկելով, ես ձեռնարկում եմ կործանարար եւ անպատիվ իշխանավորների կողմից ավերված Քո սուրբ տան վերանորոգությունը»[13]:

Եւ ինչպես հիմնավոր կերպով ցույց է տալիս ականավոր բյուզանդագետ Շ. Դիլը, **այդ ամենի արդյունքում ձեւավորվել է կայսերական իշխանության կրոնական քաղաքականության երկակի բնույթը**՝ «Եկեղեցին արժանացավ Կոստանդինի լիակատար բարեհաճությանը, կայսեր հովանավորությունը երբեք չդարձավ սակարկության առարկա, բայց բոլոր այդ բարերարությունների փոխարեն եկեղեցին ընդունեց գահակալի վերահսկողությունը եւ նրա կայսերական միջամտությունը եկեղեցական գործերին՝ ինչպես ունեցվածքին, այնպես էլ մարդկանց առնչվող հարցերում»[14]:

Այս համատեքստում պետք է քննարկել արիոսականության, ավելի ճիշտ կլինի ասել Դ դարասկզբի երրորդդարանական վիճաբանությունների հակադիր թեւերի նկատմամբ Կոստանդին կայսեր դիրքորոշումը: Քաղկեդոնական եկեղեցագիտությունն, ի դեպ, քննարկվող հիմնահարցի իր լուծումներում առաջնորդվում է բացահայտ հիմնազուրկ այն սկզբունքով, թե արիոսականության նկատմամբ Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականության ակունքներում ընկած է եղել հենք իրենց՝ արիոսականների գործունեությունը[15]: Եւ հանուն ճշմարտության պետք է նկատել, որ իրականությանն առավել մոտ է այն տեսակետը, թե որպես քրիստոնեությանը ուշ մերձեցած անհատ, Կոստանդինը չէր հասցրել խորամուխ լինել կրոնական հավատի գաղտնիքների մեջ: Դրանով էր պայմանավորված այն, որ Կոստանդինը բավականին մակերեսորեն էր դատում Արիոսի եւ Ալեքսանդր Ալեքսանդրացու վիճաբանության մասին, ավելի ճիշտ՝ հստակորեն չէր պատկերացնում նրանց վեճի էությունը[16]:

Այդ տեսակետի օգտին է խոսում նաեւ իրադարձությունների ժամանակակից եւ ականատես Եւսեբիոս Կեսարացու հավաստումը,թե տեղեկանալով արիոսական վիճաբանությունների մասին՝Կոստանդին կայսրը «... հոգու ցավ զգաց եւ այդ գործն անձնական դժբախտություն համարելով՝անմիջապես իր շրջապատի բարեպաշտ մարդկանցից ընտրեց մեկին (խոսքն, անկասկած, Հոգիա Կորդուբացու մասին է՝ Ա. Ք.), որին լավ ճանաչում էր իր առաքինի եւ բարեպաշտ հավատով, որը նախկինում ես փառաբանվել էր բարեպաշտության դավանանքով (մատնանշում է դոնատիստական վեճերի հաղթահարման գործում Հոգիա

13 **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина, գիրք I, գլ. 55:

14 **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, էջ 22:

15 Այդ մոտեցման մանրամասները տե՛ս **В. А. Карташев** Вселенские соборы.СПб., 2002, էջ 21. **Иоанн еписк. Аксайский**.История Вселенских соборов.М., 1995, էջ 22:

16 Տե՛ս **Иоанн еписк. Аксайский**.История Вселенских соборов, էջ 22-23:

Կորդուբացու դերը՝ Ա. Ք.) եւ նրան մեղավորների (Արիոսի եւ Ալեքսանդր Ալեքսանդրացու՝ Ա. Ք.) անունով չափազանց կարեւոր նամակ հանձնելով՝ ուղարկեց Ալեքսանդրիա՝ հակամարտողների միջեւ խաղաղություն հաստատելու»[17]:

Դատելով նամակի բովանդակությունից՝ կարելի է վստահաբար պնդել, որ **վիճաբանության բուն էությունը դուրս է մնացել կայսեր ուշադրությունից** եւ, ամենայն հավանականությամբ, նա չի ենթադրել անգամ, թե հավատքային առումով որքան խորքային ու էական են քննարկվող հարցերը: Դա հավանաբար պետք է բացատրել նրանով, որ կայսրին հիմնահարցը հետաքրքրել է միայն իր քաղաքական ծրագրերի (երկրի ներքին անդորրը պահպանելու) տեսանկյունից: Այդ եզրահանգումն ուղղակի կարելի է փաստել կայսեր կողմից արիոսական վիճաբանությունները «չնչին եւ անկարեւոր» որակմամբ: Եւսեբիոս Կեսարացին վկայում է, որ այդ կապակցությամբ կայսրն Ալեքսանդր Ալեքսանդրացուն եւ Արիոսին գրում է. «... իմ լսողությունը, կամ ավելի ճիշտ՝ դաժանորեն սիրտս խոցեց այն լուրը, որ ձեր միջեւ ավելի ծանր տարաձայնություն է ծագել, ... եւ որ դուք, որոնց միջոցով հույս ունեի բուժել ուրիշներին, ինքներդ ավելի մեծ բուժման կարիք ունեք: **Երբ ես սկսեցի դատել այդ վիճաբանությունների սկզբի եւ առարկայի մասին, ապա դրանց առիթն ինձ միանգամայն աննշան թվաց եւ նման քննարկմանն անարժան**: Այդ իսկ պատճառով ... օգնության կանչելով աստվածային նախախնամությունը, իրավունք եմ վերապահում միջնորդ եւ խաղաղության հովանավոր հանդիսանալ ձեր փոխադարձ թյուրըմբռնման միջեւ»[18]:

Եկեղեցական մատենագրությանը քաջածանոթ այս տողերը ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս նախնական շրջանում արիոսականության նկատմամբ Կոստանդին կայսեր վերաբերմունքի մասին: Եւ որքան էլ քաղկեդոնական աստվածաբաններն ու եկեղեցագետները փորձեն «հիմնավորել», թե դա արիոսականների (Եւսեբիոս Նիկոմեդացու) «ազդեցության հետեւանքն է», **չափազանց ակնհայտ է այդ հարցում կայսեր օգտապաշտ մոտեցումը**: Միանգամայն օրինաչափ պետք է համարել նաեւ այն, որ անդրադառնալով վիճաբանությունների էությանը՝ **կայսրը հավասարապես դատապարտում է երկու կողմերին**. «Երբ դու, Ալեքսանդր, հարցրել ես քահանաներին, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ է մտածում օրենքի որեւէ հատվածի մասին, կամ որ ավելի ճիշտ է ասել, քննարկման ես դրել հարցի անօգուտ հատվածը, - գրում է կայսրը, - այդժամ դո՛ւ, Արիոս, անիտեմաբար առաջադրել ես այն, ինչի մասին նախապես պետք չէր մտածել, կամ մտածելով հարկ էր լռել՝ ահա թե որտեղից է ձեր միջեւ թյուրընբռնում ձեւավորվել, խզվել հաղորդությունը եւ սուրբ ժողովուրդը, կուսակցությունների բաժնվելով, հեռացել է ընդհանրական Եկեղեցու հետ ունեցած համամտությունից»[19]:

Արիոսականության նկատմամբ Կոստանդին կայսեր դիրքորոշման տրամաբանությունը պարզաբանող հաջորդ քայլը պետք է համարել վիճաբանող կողմերին ուղղված «համերաշխելու» կոչը: Դա մեկ անգամ եւս վկայում է, որ կայսեր կողմից փորձ է արվում հավատքային արմատական նշանակություն ունեցող երրորդաբանական հիմնահարցերի լուծումը

17 **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина, кн.II, гл.63.
18 Անդ, գլ.68:
19 Անդ, գլ. 69:

դուրս դնել հավատքի դաշտից, կամ որ նույնն է՝ երրորդաբանության եւ հակաերրորդաբանության միջեւ հավասարության նշան դնել: Փասպը Կոստանդինի հորդոր-հրահանգն է. «Այդպիսով, թող ձեզնից յուրաքանչյուրը հավասար անկեղծությամբ ների մյուսին եւ ընդունի այն, ինչն արդարացիորեն խորհուրդ է տալիս ձեր ծառայակիցը: Հատկապես ինչ: Այդ մասին անցյալում պատշաճ չէր ո՛չ հարցնել, ո՛չ պատասխանել հարցերին, քանի որ նման հարցերը ինչ-որ օրենքով չեն հարկադրվում, այլ առաջադրվում են անպտուղ վեճերում դատարկաբանությամբ հրապուրվելու համար, թեեւ երբեմն հանդիսանում են բնական վարժանքի միջոց, բայց մենք պետք է այն պահենք մտքում, այլ ոչ թե թեթեւամտորեն հրապարակենք հասարակական ժողովներում եւ անմիտ կերպով չվստահենք ամբոխի լսողությանը»[20]:

Հավասարակշռող կրոնական այդ քաղաքականության օրինաչափ արդյունքը պետք է համարել նաեւ կայսեր հորդորը, ուր մասնավորապես նշվում է. «Այսպիսով, թող եւ անզգույշ հարցը եւ անմիտ պատասխանը փոխադարձ ներողամտությամբ ամփոփվեն ձեզնից յուրաքանչյուրի մեջ, քանի որ **ձեր վիճաբանության առիթը օրենքի որեւէ գլխավոր վարդապետության չի վերաբերում, դուք Աստծու ծառայության մեջ ինչ-որ նոր հերձված չեք ներմուծում, ձեր մտածելակերպը նույնն է, դրա համար էլ դուք դարձյալ կարող եք հեշտությամբ վերականգնել հաղորդությունը** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[21]: Ավելի քան ակնհայտ է, որ Կոստանդին կայսրն ամենեւին խորամուխ չի եղել աստվածաբանական վիճաբանական հիմնահարցի էության մեջ: Ավելի ճիշտ կլինի ասել, նա համարում է, որ երրորդաբանական այդ վիճաբանությունն ապարեզ է իջել «կողմերի քմահաճույքի» հետեւանքով եւ դույզն-ինչ չփորձելով խորամուխ լինել բուն հավատքային հարցերի մեջ, կողմերին «համամտության» կոչ է անում: «**Երբ դուք մեկդ մյուսի հետ վիճաբանում եք անկարեւոր եւ միանգամայն աննշան առարկաների շուրջ**, - գրում է կայսրը, - **այժմ ձեր մտքերի անհամաձայնությունը թույլ չի տալիս ղեկավարել Աստծու ժողովրդի բազմությանը եւ ոչ միայն չի թույլատրում, անգամ դա անօրինական է դարձնում**: ... Եւ եթե այդպես է, ապա առավել ճշմարտացի չի՞ լինի ձեզ, մեծն Աստծու սպասավորներիդ, այդ ամենը հաղթահարել փոխադարձ համերաշխությամբ (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»[22]:

Գերնպատակ ունենալով եկեղեցական խաղաղության վերականգնումը (թեկուզեւ հավատքային հարցերում անթույլատրելի փոխզիջման ճանապարհով)՝ Կոստանդին կայսրն առաջարկում է ոչ թե լուծել հարցը, այլ պարզապես պահանջում է մի կողմ թողնել «անկարեւոր հարցի անհամաձայնեցված քննարկումները» եւ «համամտության գալով» վերականգնել միմյանց հետ խզված հարաբերություններն ու եկեղեցական անդորրը: «Եթե դուք, ինչպես ասացի, ունեք միեւնույն հավատը եւ հավատքի միանման ընկալում, եւ եթե օրենքի պատվիրանն իր ընդհանուր մասերով հոգուն հարկադրում է բացարձակ միեւնույն դիրքորոշման, - գրում է Կոստանդին կայսրը, - ապա հավատքի էությունը չշոշափող մանրիկ վիճաբանության դրդող միտքը թող ձեր միջեւ ոչ մի վեճ կամ բաժանում չառաջացնի: Դա

20 Անդ:
21 Անդ, գլ. 70:
22 Անդ, գլ. 71:

ասում եմ ոչ այն բանի համար, որ ցանկանում եմ հարկադրել կատարելապես համաձայնելու այդ անկարեւոր կամ որեւէ այլ հարցի շուրջ, ... : Աստվածային նախախնամության մասին դատողություններում թող ձեր մեջ լինի մեկ հավատ, մեկ մտածելակերպ, Ամենաբարի Էության մասին մեկ ընբռնում: Իսկ ինչ վերաբերում է անկարեւոր հարցերին, որոնց քննարկումը ձեզ հակամտության է հանգեցնում, ապա անհամաձայնեցված այդ կարծիքները պետք է մնան ձեր մտքում եւ պահպանվեն հոգու գաղտնարանում: ... Վերադարձեք փոխադարձ բարեկամության եւ սիրո, ձեր գիրկը բացեք ողջ ժողովրդի առջեւ, մաքրեցեք ձեր հոգիները, այնուհետեւ կրկին ճանաչեցեք մեկդ մյուսին»[23]:

Քրիստոնեության նկատմամբ Կոստանդին կայսեր քաղաքականության եւս մեկ բնորոշ գծի պերճախոս վկայությունը պետք է համարել նաեւ Արիոսին եւ Ալեքսանդր Ալեքսանդրացուն հղված ուղերձի վերջաբանը, ուր կայսրը պարզապես պահանջում է. «... վերադարձրեք ինձ խաղաղ օրերն ու անհոգ գիշերները, որպեսզի ես եւս վերջապես անիծով կյանքում մաքուր լույսով մխիթարություն եւ սփոփանք գտնեմ: Հակառակ դեպքում ինձ ոչինչ չի մնա անել, քան հեկեկալ, ամենուր արցունք թափել եւ իմ դարն անցկացնել առանց որեւէ հանգստության, որովհետեւ քանի դեռ Աստծու մարդիկ ... բաժանվում են այդքան անարդարացի եւ կործանարար երկպառակությամբ, կարող ե՞մ արդյոք ես հոգեպես հանգիստ լինել»[24]: Դժվար չէ նկատել, որ **կայսեր «հոգեւոր հանգստության» որոնումների հիմքում ընկած են ավելի շատ քաղաքական, քան թե կրոնական շահերը**: Իսկ դրանից ուղղակի հետեւում է, որ Դ դարի 20-ական թվականներին ասպարեզ իջած եւ **եկեղեցու համար առանցքային նշանակություն ունեցող երրորդաբանական վեճերի նկատմամբ Կոստանդին կայսրը հանդես է բերել հավասարակշռող մոտեցում**:

Այդ առնչությամբ էական ճշգրտումների կարիք ունի Արիոսին ուղղված Կոստանդին կայսեր երկրորդ ուղերձի վավերականության հարցը, որի մասին Դ դարի պատմագրությունը ոչ մի տեղեկություն չի պահպանել: Հետեւելով Ե դարի եկեղեցական պատմագրության առանձին ներկայացուցիչների պնդումներին եկեղեցագիտության մեջ շրջանառվում է այն տեսակետը, թե Կոստանդին կայսրը, ամենայն հավանականությամբ «Եւսեբիոս Նիկոմեդացուն հակադրվող (այսինքն՝ հակաարիոսական) կուսակցության» ազդեցությամբ, նոր ուղերձ է հղել Ալեքսանդրիա, բայց այս անգամ միայն Արիոսին եւ արիոսականներին[25]:

---

23 **Անդ**:

24 Անդ, գլ. 72:

25 Ինչպես արդեն նշվել է, Արիոսին ուղղված Կոստանդին կայսեր երկրորդ ուղերձի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում ո՛չ Եւսեբիոս Կեսարացին եւ ո՛չ Դ դարի պատմագրությունը: Ավելի ճիշտ կլինի ասել Եւսեբիոսը հավաստում է, որ «գործն այնքան հեռու էր գնացել, **որ այն այլեւս անհնարին էր կանգնեցնել մեկ ուղերձով** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)» (տե՛ս **Евсевий Панфил.** О жизни Блаженного Василевса Константина, кн. II, гл. 73): Այս երկրորդ ուղերձի ամբողջական տեքստը շարադրված է քաղկեդոնական «Տիեզերաժողովների գործքում» (տե՛ս «**Деяния Вселенских Соборов**». Т. I, **I, II, III Соборы**, СПб., 1996, էջ 33-38): Փաստաթուղթն «ստեղծող» հեղինակների համար հիմք է հանդիսացել Սոկրատես պատմիչի այն պնդումը, թե Կոստանդին «կայսրն Արիոսի եւ նրա համախոհների դեմ այլ ուղերձներ է գրել՝ ծիծաղելով նրանց վրա եւ խոցելով նրան հեգնանքով եւ այդ ուղերձներն ամենուր տարածել է քաղաքներում» (տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн.I, гл, 9, էջ 33): Ե դարի բազմաթիվ հեղինակներ կոնտեքստից կտրելով Սոկրատեսի կողմից հիշատակվող տեղեկությունը եւ լիովին անտեսելով այն փաստը, որ պատմիչը խոսում է հերետիկեական ուղերձների մասին, շինծու «պատմություն են ստեղծել» Արիոսին եւ նրա համախոհներին Կոստանդին կայսեր կողմից հղված երկրորդ ուղերձի մասին: Այդ ուղերձի «բնագրային» տեքստի «պատմականությունը հավաստում» են Ե դարի գործիչներ Գելասիոս Կիզիկեցին (տե՛ս **Gelasii Cyziceni.** Historia Concilii Nicaeni / **Migne J. P.**

Դատելով այդ «փաստաթղթից»՝ Կոստանդին կայսրը «ոչ միայն բացահայտում է Արիոսի եւ նրա համախոհների վարդապետության կեղծ էությունը», այլեւ պահանջում է, «որ նա իր հպարտ գլուխը խոնարհի Ավետարանի իշխանության առջեւ», այլապես այնպիսի պատժի կենթարկվի, որը չի կարող անգամ ենթադրել[26]:

Այդ ամենի ընդհանրացմամբ **պատմականորեն հաստատված պետք է համարել, որ Դ դարի առաջին տասնամյակները Հռոմեական կայսրության համար կրոնական որոնումների ժամանակաշրջան էր**: Դարասկզբի հակաքրիստոնեական պետական հալածանքները թեեւ ծանր հարված հասցրեցին եկեղեցուն, սակայն իրենց նախորդների նման դրանք եւս ի զորու չեղան կասեցնելու քրիստոնեության հետագա ծավալումը: Դարաշրջանի հասարակական հարաբերությունները բնութագրող հոգեւոր գործոնների շարքում անհրաժեշտաբար պետք է մատնանշել նաեւ քրիստոնեության անարյուն հաղթանակը իր դարն ապրող միհնչքրիստոնեական կրոնական ու պաշտամունքային համակարգերի, այդ թվում՝ Հռոմեական պետական կրոնի նկատմամբ: Ու թեեւ Միլանի 311-313 թթ. հրովարտակներով ազատ դավանանքի իրավունք ստացած քրիստոնեության եւ կայսրության տարածքում գործող այլ կրոնների միջեւ հավասարություն էր հաստատվել, սակայն ավելի քան ակնհայտ էր, որ հոգեւոր ուղղվածության եւ քարոզչական բնույթի շնորհիվ քրիստոնեությունը շարունակ ընդլայնում էր աշխարհագրական տարածվածությունը: **Այդ միտումների արդյունքում եկեղեցու գիրկն անցավ նորադարձների մի զգալի հատված,** որի արդյունքում քրիստոնեությունը վերածվեց Հռոմեական կայսրության առավելագույն տարածված կրոնի:

Միլանի հրովարտակներից հետո քրիստոնեության նկատմամբ փոխվեց նաեւ պետական իշխանության կրոնական քաղաքականությունը:Դ դարի 20-ական թվականների կեսերից սկսած Կոստանդին կայսրը բացահայտ կերպով հովանավորում էր եկեղեցին՝ այն համարելով պետության ամրապնդման կարեւորագույն գործոններից մեկը[27]: Վավերագրե-

---

Patrologiae cursus completus. **Series Graeca** (այսուհետ՝ **PG**), T. 85, III) եւ Եպիփան Կիպրացին (տե՛ս **Epiphanii S. P. N.** Adversus Octoginta haereses / **Migne J.-P. PG**, T. XLIII, Lib. III, Paris, 1874, LXIX, 9), իսկ կաթողիկյան ականավոր եկեղեցագետ Բորոնիսն այն թվագրում է 319 թ. այսինքն՝ ավելի վաղ, քան առաջին ուղերձն է, քանի որ այն գրվել է Կոստանդինի՝ արեւելքում հաստատվելուց (324 թ.) հետո: Այդ տեսակետն են պաշտպանում նաեւ քաղկեդոնական այլ հեղինակներ:

26 Այդ կապակցությամբ կայսրն, իբր, գրում է. «Ես դեռեւս մտածում եմ, պետք է դու ապրես թե մահանաս: Եկ ինձ մոտ, ե՛կ, ասում եմ Աստծու մարդու մոտ»: Եւ հանրագումարի բերելով պնդում է. «Վստահ եղիր, որ իմ հարցերով ես կխորտակեմ սրբության նկատմամբ քո սրտի անորոշությունը, եւ հուսով եմ, որ այն, ինչը քեզ անբանական է թվում, Աստծու բարեգթության շնորհիվ քո առջեւ հանդես կգա ակնհայտի տեսքով: Եւ եթե դու ներկայանաս առողջ հոգով եւ ճանաչես լույսի ճշմարտությունը, ես երախտապարտ կլինեմ Աստծուն եւ կուրախանամ քո բարեպաշտությամբ»: Այդ ամենին զուգընթաց կայսրը «հավելում է» նաեւ. «... դու որտե՞ղ ես ցույց տվել քո մտքի ակնհայտ վկայությունը: ... Ընդունո՞ւմ ես, որ Աստված միասնական է: Իմ կարծիքն այսպիսին է. այդպես մտածիր նաեւ դու: Ասո՞ւմ ես արդյոք, որ Աստծու Բանն, իր էությամբ, ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Գովում եմ եւ դրա համար, այդպե՛ս հավատա: Եթե ինչ-որ բան ավելին ես խառնում, ես հերքում եմ: ... Ո՞վ գիտի Հորը, եթե ոչ Հորից ծնվածը: Ո՞ւմ գիտի Հայրը, եթե ոչ նրան, ում Նա ծնել է անսկիզբ ու հավիտենապես: Ոչ ուղղադավան հավատով, դու մտածում ես, որ պետք է ենթադրել անցողիկ առանձնավորության մասին. ես իմ կողմից ընդունում եմ Հոր եւ Որդու ամենաթափանց եւ գերագույն իշխանությունը, նրանց էության միասնությունը» (տե՛ս «**Деяния Вселенских Соборов**».T.I, էջ 38, 34-35):

27 Եկեղեցական մատենագրությունը հավաստի տեղեկություններ է պահպանել այն մասին, որ Կոստանդին կայսրը կասեցրել է բանակում քրիստոնյաների ծառայությունն արգելելու մասին Դիոկղետիանոսի արգելքը եւ ծառայության է վերցրել քրիստոնյաների, որոնց անդավաճան ծառայությունը մեծապես օժանդակել է նրա հաղթարշավներին: Կայսրության ներքին անդորրը պահպանելու նպատակով Կոստանդին կայսրը բռնությամբ

ը վկայում են եւ այն մասին, որ եկեղեցու նկատմամբ որդեգրած այդ քաղաքականությունը լիովին համապատասխանել է Կոստանդին կայսեր աշխարհաքաղաքական ըմբռնումներին: Եւ կասկածից վեր պետք է համարել, որ այդ քաղաքականությունը պատճառաբանված էր նաեւ նրանով, որ կայսրը դեռեւս կրում էր **հեթանոսական կրոնի պաշտոնական առաջնորդի տիտղոսը**, իսկ կայսրության **պետաքաղաքական վերնախավի ներկայացուցիչներից շատերը զուգահեռաբար իրականացնում էին նաեւ քրմական եւ ավգուրական գործունեություն**: Ըստ էության նույնը պետք է ասել նաեւ Հռոմեական Սենատի մասին, որը նախկինի նման իր նիստերն սկսում էր Հաղթանակի ասպծուն ձոնվող «սրբազան արարողակարգով»:

Հանրաճանաչ է, որ եկեղեցու ներքին կյանքում տեղ գտած ասպվածաբանական ցանկացած լուծում (հայեցակարգ) ամենից առաջ հանդես է գալիս իբրեւ հավատքային երեւույթների յուրատիպ արտացոլում: Այդ տեսանկյունից միանգամայն բնական է պնդել, որ դոգմատիկ գործունեության էական հատկանիշները պետք է որոշվեն հավատքային ընդհանրության (եկեղեցու) հիմնարար կողմնորոշիչների (ավանդության) հիման վրա: Քննարկվող շրջանում Հռոմեական արեւելքի ասպվածաբանական դոգմատիկ գործունեությունը հիմնականում որոշվում էր հակամարտող երկու հոսանքների՝ ուղղադավան երրորդաբանության եւ արիոսական հակաերրորդաբանության պայքարով: Այդ հոսանքներից յուրաքանչյուրն ունեցել է իր էկեկտորատը (ասպվածաբանական-դոգմատիկ խմբակցությունը), **որը ոչ միայն հանդիսացել է որոշակի հավատքային ուսմունքի կրողը, այլեւ, միաժամանակ, եղել է վերջինիս պահապանն ու վերարտադրողը**: Այդ իսկ պատճառով նշված համայնքների պրակտիկ գործունեությամբ են որոշվել նաեւ այն սահմանները, որոնցից ներս ի հայտ են եկել միմյանցից զատվող հավատքային սկզբունքների (ուղղադավան-հերձվածող) բովանդակային տարբերությունները: Այդ ամենով էր պայմանավորված նաեւ այն իրողությունը, որ հակամարտող դոգմատիկ հոսանքներից յուրաքանչյուրը, սեփական հավատքային համոզմունքների հիմքի վրա ոչ միայն հստակորեն առաջադրում էր իր համար առաջնային նշանակություն ունեցող նպատակներ, այլեւ դրանց իրագործման համար մշակում եւ արմատավորում էր արտաքին հոգեւոր-հասարակական միջավայրի վրա ազդելու կոնկրետ մեխանիզմներ: Եւ պետք է ընդունել, որ հոգեւոր եւ ասպվածաբանական տեսանկյունից եւս Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությունն աչքի չի ընկել հետեւողականությամբ:

Ճշմարիտ է, որ քրիստոնեության նկատմամբ Կոստանդին կայսեր կրոնական քաղաքականությունն արմատապես տարբերվում է իր նախորդների եւ ժամանակակիցների համանուն մոտեցումներից: Այդուհանդերձ, կայսեր կողմից քրիստոնեության պետական հովանավորչությունը միակողմանի էր եւ օգտապաշտ, որը բազմաթիվ հարցերում անտեսում էր եկեղեցական շահերը: Քննարկվող ժամանակահատվածում Հռոմեական քաղաքական վերնախավի հոգեւոր եւ հասարակական-քաղաքական ուղղվածության ձեւավորման վրա

կասեցրել է նաեւ դոնատական հերձվածի հետագա գործունեությունը, թեեւ ի հակադրություն իր իսկ վավերացրած նիկեական կանոնական որոշումների, անտարբեր է մնացել մելիտենական հարձվածի գործունեության նկատմամբ: Նա նաեւ նպաստել է 325 թ. Նիկեայի տիեզերական ժողովի կողմից աքսորված Արիոսի եւ արիոսական եպիսկոպոսների աքսորից վերադարձին եւ տարօրինակ կերպով համերաշխել է ուղղադավան երրորդաբանության ջերմեռանդ պաշտպան Աթանաս Ալեքսանդրացու աքսորի որոշմանը:

անուրանալի կնիք է թողել եւ այն, որ **հռոմեական կայսրերը շարունակում էին կրել հեթանոսական կրոնի պաշտոնական առաջնորդի՝ «Pontitex maqsimus» տիտղոսը**: Այդ գործընթացում իր բացասական մեծ ազդեցությունն է ունեցել նաեւ կայսրության պետաքաղաքական վերնախավի ներկայացուցիչների եւ Հռոմեական Սենատի պահպանողական բնույթը եւ հեթանոսության հետ ունեցած անուրանալի կապը:

Ի մի բերելով այդ ամենը կարող ենք վստահաբար պնդել, որ կրոնների եւ եկեղեցու նկատմամբ Կոստանդին կայսրն իր քաղաքականությունը կառուցել է օգտապաշտության դիրքերից: Հասարակական-քաղաքական եւ հոգեւոր կյանքում այդ, հավասարապես նաեւ կայսեր տոլերանտ վերաբերմունքը,դարձան հիմնարար այն պատճառներից մեկը, որի արդյունքում Դ դարի 20-ական թվականների երկրորդ կեսին եւ 30-ական թվականներին կազմակերպչական ավարտուն տեսք ստանալով՝ պատմական ասպարեզ իջավ հականիկեական ընդդիմությունը: